ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 22203; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 11 >> փետրվարի 2014 թվականի N 9 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԹՎՈՎ 4 ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԵԿՇԱԲԱԹՅԱ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրու համայնքային ենթակայության մանկապարտեզների թվով 160(մեկ հարյուր վաթսուն) աշխատակիցների վերապատրաստման դասընթացները պատշաճ կերպով կազմակերպելու և իրականացնելու, թվով 4 (չորս) դասախոսների մեկշաբաթյա կացության և սննդի ծախսերը հոգալու անհրաժեշտությունից , ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված Կրթության բաժնի պետ՝ Հայկ Սուլթանյանի գրությունը (մուտքագրված 29.01.2014 թ. N Գ 262 թվագրմամբ) ՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վերապատրաստման դասընթացները իրականացնող թվով 4(չորս) դասախոսների մեկ շաբաթյա կացության և սննդի ծախսերը հոգալու համար հատկացնել 180,0 (մեկ հարյուր ութսուն) հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղրամյան

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2014թ. փետրվարի 11
ք.Գյումրի